ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության փորձագետ Տաթևիկ Զաքարյանի

Ես՝ Տաթևիկ Զաքարյանս, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024 թվականի փետրվարի 7-ից (սույն թվականի փետրվարի 7-ին կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն):

Սույն թվականի օգոստոսի 7-ից մինչև նոյեմբերի 6-ը, համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1) հարկային վարչարարության ոլորտի անհրաժեշտ ուսումնասիրությունների (այդ թվում՝ միջազգային փորձի) և վերլուծությունների իրականացում,

2) 2024 թվականի առաջին ինն ամիսների հաշվետվության ներկայացում՝ հիմնված հարկային և մաքսային օրենսդրության մեջ կատարված այն փոփոխությունների վրա, որոնք 2024 թվականի առաջին ինն ամիսների ընթացքում կարող էին ազդել պետական բյուջեի եկամուտների վրա,

3) օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ համապատասխան գրությունների, տեղեկանքների պատրաստում և տրամադրում Ֆինանսների նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին,

4) այլ մարմինների կողմից մշակված՝ հարկային վարչարարության մեթոդաբանությանը վերաբերող իրավական ակտերի և օրենքների նախագծերի ուսումնասիրությունների իրականացում և դիրքորոշումների ձևավորում, որոնցից են՝

- «Գյումրիի զարգացման ռազմավարական ծրագիր» փաստաթուղթը,
- «ՀՀ Վայոց ձորի մարզի Գետիկվանք–Եղեգնաձոր ինքնահոս ջրատարի կառուցում» հանրային ներդրումային ծրագրի նախագիծը,
- «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) հասարակական կազմակերպության Բաց բյուջեի 2023 թվականի հետազոտության արդյունքները և դրանցից բխող առաջարկությունները,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 21-ի N 152-Ա որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
- «Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին ամպային տիրույթով ապահովելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
- «Արենիի և հարակից գյուղերի ժառանգության հանգույցի վերականգնում նախագծի» լրամշակված տեխնիկատնտեսական ուսումնասիրությունը,
- «Օտարերկրյա ներդրումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծը,
- «Արտադրանքի սերտիֆիկացման և լաբորատոր փորձարկումների վճարների փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» և «Որակի և անվտանգության կառավարման համակարգերի և արտադրանքի համապատասխանության սերտիֆիկատների ստացման աջակցության ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծերը,
- «Հայաստանի Հանրապետության արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնության 2022 թվականի զեկույցի» նախագիծ:

5) Վարչության գործառույթներից բխող այլ ընթացիկ աշխատանքների իրականացում, մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացված առաջարկությունների, բարձրացված հարցերի վերաբերյալ դիրքորոշումների ձևավորում և սահմանված կարգով դրանց ընթացքի ապահովում:

Եկամուտների քաղաքականություն և
վարչարարության մեթոդաբանության
վարչության փորձագետ՝

Տաթևիկ Զաքարյան
06.11.2024թ.